Աստղիկ Բոյաջյան
ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի Վաչե Պարտիզոնու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ astghikboyajyan@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.2-218

ՀՈԳԵԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ «ՄԱՐԴ ԴԱՌՆԱԼՈՒ» ՃԱՆԱՊԱՐՀԸ ՇԱՆԹԻ «ՇՂԹԱՅՎԱԾԸ» ԴՐԱՄԱՅՈՒՄ

Հոդվածի նպատակն է ներկայացնել Լևոն Շանթի «Շղթայվածը» դրամայի ներքին ենթաշերտերը՝ դիտարկելով ստեղծագործությունը պատմական իրողություններից այն կողմ: Հետազոտությունն արդիական է, քանի որ դարեր շարունակ և՛ հայ, և՛ համաշխարհային գրականության կենտրոնում մարդն է՝ իր ներքին չբացահայտված կողմերով, կատարելության տենչով և ինքնակատարելագործման հավերժական ճանապարհով: Մեկ դար անց բախվում ենք այն խնդիրներին, որոնք իրենց արտահայտությունն են գտել դրամայում: Այս առումով մեր նպատակն է խորքային վերլուծության ենթարկել ստեղծագործությունը և գտնել այն ներքին գծերը, որոնք մնացել են պատմական թեմատիկայի ստվերում:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել Լևոն Շանթի ստեղծագործությունները՝ կատարելով թեմատիկ և ժամանակագրական շրջանաբաժանում, տանել համեմատականներ «Շղթայվածի» և այդ շրջանում գրված այլ գործերի միջև, քննել դրաման համաշխարհային գրականության ուսումնասիրության դիտակետից:

Հետազոտության ընթացքում կիրառվել են սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի և համեմատական մեթոդները:

Հետազոտությունից բխող հիմնական եզրահանգումն այն է, որ Շանթը «Շղթայվածը» դրամայում պատմական իրողութ-

յունները գեղարվեստականացնելով՝ փորձել է պատասխանել այն հավերժական հարցերին, որոնք հուզում են մարդկությանը: Արտավազդի դերում մեզնից յուրաքանչյուրն է. արտաքուստ չերևացող կապանքները ամեն օր ու ամեն ժամ ճնշում են մեզ ներսից՝ վերածելով մեր կյանքը ամենօրյա պայքարի, մարդուց մարդ դառնալու պայքարի:

Հիմնաբառեր. Ինքնակատարելագործում, «Շղթայվածը» դրամա, Արտավազդ, Լևոն Շանթ, փիլիսոփայական և հոգեբանական հարցադրումներ:

Ներածություն

Լևոն Շանթի «Շղթայվածը» դրաման առաջին հայացքից պարզ սյուժետային նախահիմք ունեցող գործ է, որտեղ պատմական թեմայի արծարծումով հեղինակը փորձ է կատարում անդրադառնալ իր ժամանակաշրջանում տեղի ունեցող քաղաքական դեպքերին, սակայն այս ամենը միայն առաջին հայացքից: Շանթի ստեղծագործությունները տարբերվում են հենց մեկնության մի քանի շերտերով: Ստեղծագործությունների կենտրոնում մարդն է՝ իր ներքին խնդիրներով, համոզմունքներով և «գերմարդ» դառնալու հավերժական ձգտումով: «Շղթայվածը» դրամայում մարդն է, որի պայքարը ոչ միայն արտաքին իշխողների դեմ է, այլ նաև ներքին չբացահայտված եսերի: Պատահական չէ, որ այս ստեղծագործության մասին խոսելիս Վաչագան Գրիգորյանը նշում է, որ եթե դրաման կորուստներ էր ունենալու գեղարվեստական լուծումների առումով, ապա անհամեմատ շահելու էր գաղափարական, բովանդակային առումով: «Շղթայվածը» իրավամբ կարելի է **գաղափարների** դրամա համարել: (Գրիգորյան, 2020, էջ 279)

Արդ, մեր ուսումնասիրությունն անդրադառնում է դրամայում առկա մարդու ներքին պայքարի թեմայի քննությանը՝ դիտարկելով թեման ինչպես Շանթի այլ ստեղծագործությունների, այնպես էլ հայ և համաշխարհային գրականության համաբնույթ գործերի համատեքստում:

Տեսական հիմքեր

Հոդվածում կիրառվել է Ֆ. Նիցշեի «գերմարդու» գաղափարախոսությունը, ինչպես նաև գրականության տեսաբանների և գրականագետների (Վաչագան Գրիգորյան, Գրիգոր Շահինյան, Խորեն Սարգսյան, Յակով Խաչիկյան, Սերգեյ Սարինյան և այլք) ներկայացրած վերլուծությունները ստեղծագործության վերաբերյալ: Քննության առարկա են դարձել նաև Շանթի տարբեր շրջաններում գրված այլ ստեղծագործություններ («Լեռան աղջիկը», «Դուրսեցիները», «Դերասանուհին», «Հին աստվածները», «Կայսրը»):

Արդյունքներ

«Հոգեկան կարողությունների զարգացումը և «մարդ դառնալու» ճանապարհը Շանթի «Շղթայվածը» դրամայում» թեմայով հոդվածի քննության արդյունքները ներառում են մարդու կերպարի վերլուծության այն բոլոր հո-

գեբանական և փիլիսոփայական դրույթները, որոնք քննվել են վերոնշյալ ստեղծագործությունների համատեքստում: Համեմատական քննությունը թույլ է տալիս բացահայտել Շանթի գաղափարական գերհերոսի կերպարը՝ ուժեղ, հաճախ անհասանելի, առասպելականի և իրականի մեջտեղում, բայց և մարդ՝ ներքին հույզերով, չսանձահարված փոթորիկներով և կատարյալ դառնալու ցանկությամբ: Հերոսի զարգացման հիմքում ընկած է «մարդուց մարդ» անցումը, երբ դժվարին հանգամանքներում արթնանում են դեռևս չդրսևորված և չբացահայտված կողմերը:

Քննարկում

Լևոն Շանթի «Շղթայվածը» դրամայի պատմական դիպաշարում դրսևորվում են մարդու բարոյափիլիսոփայական գծերը և այս երևույթը հատուկ էր նաև մինչ այդ գրված դրամաներին: Գրողի առաջին շրջանի գործերին բնորոշ է մարդու իդեալականացումը («Մնաք-բարովի իրիկունը» (1891), «Լեռան աղջիկը» (1892), «Երազ օրեր» (1892), «Դուրսեցիները» (1894)): Երկրորդ շրջանի գործերում Շանթը գալիս է անհատի ընկալման փիլիսոփայական ելակետին («Հին աստվածներ» (1909), «Կայսր» (1914), «Շղթայվածը» (1918), «Ինկած բերդի իշխանուհին» (1921), «Օշին Պայլ» (1932)):

Շանթի գրական գործունեությունը սկսվում է բանաստեղծություններով, որոնցում դեռևս լիարժեք ուրվագծված չէին գրողի ոճական առանձնահատկությունները, սակայն առանձին գործերում արդեն նկատելի էին գիշերվա և երազի պատկերներ:

«Ինձի համար այն ժամերը թանկ եղան,
Երբ ներշնչված ստեղծեցի միշտ անգո,
Բայց անձնուրաց ազնիվ դեմքեր սիրեկան,
Երբ իրական աշխարհին մեջ միշտ դժգոհ,
Իդեալ կյանքեն երգել ուզեցի.
Ես պատրանքը սիրեցի»:

(Լևոն Շանթ, 1980, էջ 45)

Անհատի իր դավանանքը, գեղարվեստական իր որոնումները Լ. Շանթը դիպուկ բնորոշել է «Ես պատրանքը սիրեցի» բանաստեղծության մեջ: Ուշագրավն այս դեպքում իդեալի իր որոնումների, «պատրանքի» փայփայման հստակ գիտակցումն է, որով նա զգալիորեն տարբերվում է մյուս ռոմանտիկներից (Փանոսյան, 1992, էջ 32–33):

Շանթի «փախուստը» ճնշող իրականությունից՝ հիմք է դառնում դեպի պատրանքը գնալուն: Առաջին շրջանի բանաստեղծություններին պիտի հաջորդեին արձակ գործերը, որոնք կառուցվում էին նույն տրամաբանությամբ և ինչ-որ չափով ինքնակենսագրական բնույթ էին կրում: Այս շրջանի մասին խոսելիս Գրիգոր Շահինյանը նշում է. «Այս բոլորին մէջ կը տեսնուի մանաւանդ մենաւոր արուեստագէտի մը եւ մտածողի մը ճիգը իր կեանքին արարքներուն եւ միտքի ու հոգիի արքասիքին մէջէն ձգտելու միշտ աւելի վեր, իտէալի դժուար այլ հոգեպարար բարձունքները: Սխալ պիտի ըլլար մտածել, սակայն, որ Լեւոն Շանթ գոհացած է այսքանով: Անձնական ձգտումին միա-

ցուցած է հանրային ծառայութեան ցանկութիւն մը:

Կեանքը չի ներկայացներ «այնպէս ինչպէս որ է», այլ՝ «այնպէս ինչպէս պիտի ցանկար որ ըլլար», իր սեփական երազին մէջէն» (Շահինեան, 1967, էջ 18–19):

Թերևս կյանքի ծանր իրողություններն են, որ ստիպում են Շանթին փնտրել իդեալ և չգտնելով այդ իդեալի մարմնացումը իրականության մեջ՝ գնալ երազի հետքով:

Սեփական երազի հետքերով գնալու միտումը պիտի ստիպեր Շանթին հրաժարվել առաջին շրջանի իդեալականացված կերպարներից և այս հանգամանքը հենց ցավոտ իրականությանը բախվելու առաջին նշույլն էր: Խորեն Սարգսյանը այդ շրջանի մասին նշում է. «Հանձնելով անցյալին իր երիտասարդական զառանցանքները մատերիալիզմի («Դուրսեցիները» վեպի Բագրատը) ու պոզիտիվիզմի («Վերժինը», «Դարձ» և «Դերասանուհին վեպերի Արշակը, Քանյանը և Հրանտը) միասին, Շանթն անդարձ խրվում է հոռետեսության, հայեցականության և միստիցիզմի ճահիճները, կրկնում փոքր չափերով, մանրանկարչորեն, բուրժուական գաղափարախոսության ու կուլտուրայի ամբողջ պատմությունն ու վերջինիս մայրամուտը վերարտադրում մի առանձին թափով ու ոգևորությամբ («Հին աստվածներ», «Կայսր») (Սարգսյան, 1930, էջ 7):

Նշենք մի կարևոր հանգամանք էլ, որին գրականագետներից շատերը ևս ուշադրություն են դարձրել՝ գրողի ստեղծագործելու միջավայրը: Առաջին շրջանի գործերը գրված են հայրենիքում՝ ներքին քաղաքական տպավորությունների տակ, իսկ երկրորդ շրջանի գործերում նկատելի է եվրոպական շունչը: Եվ այս առումով Շանթի երկրորդ շրջանի գործերը նոր էջ են բացում անհատի մեկնության տեսանկյունից: Բարդ փոխհարաբերություններում բացվում է անհատի տիպական գծեր. «Հին աստվածներ», «Կայսր», «Շղթայվածը» այս երեք գործերը ինչքան տարբեր են, նույնքան և ունեն մեկ ընդհանուր գաղափարական կապ: Առանձին կերպարների միջոցով Շանթը տալիս է անհատի արտահայտման տարբեր ձևեր.

«Գեղարվեստական երկի նյութը միշտ առանձին մարդկանց, առանձին դեպքերի ու տեղերի մասին է: Դա առանձին կյանքի կտոր է, անհատական տառապանքներ, պայքարներ, անհատների հավատալիքը, բողոքը, դավանանքը: Բայց երբ այդ բազմաթիվ անձնական կողմերից ու հատկություններից որևէ մեկը, հատկապես շեշտվում, ընդգծվում է՝ դառնալով տիրող ամբողջության վրա, նա «այլեւս կը դադարի կարծես միայն մէկ մասնաւորի մը սեփականութիւնը ըլլալէ, միայն մէկ մասնաւորի մը սեփականութիւնը ըլլալէ, միայն մէկ մասնաւոր հոգիի մը պատկերացումը»: Վերը նշված անհատական կողմերը, շարունակում է Լևոն Շանթը, կան մեր ամեն մեկի հոգու մեջ այս կամ այն չափով: «Այդ պատճառով էլ գծուած անհատական պատկերը կ'ըզգացուի իբրև որոշ հաւաքականութեան մը հոգեկան այդ կողմին պատկերացումը: Այսինքն երկին բուն նիւթը կը նկատուի իբրև օրինակ մը, նմուշ մը աւելի ընդհանուր, աւելի խոր, աւելի համամարդկային բանի մը: Գեղարուեստի մէջ թերութիւն մըն է միայն տիպ ու ներկայացուցիչ ըլլալը. գեղարուեստի մէջ առաւելութիւն մըն է անձ ըլլալը, որ միևնույն ժամանակ

տիպիկ ալ է: Կարեւորութիւնը հոն է, որ տիպական ըլլալը անհատականութիւնը չմէռցնէ. եւ բարձրագոյն աստիճանը հոն է, երբ տիպական ըլլալը անհատականութեան խորացմանը և յստակեցմանը կը ծառայէ» (Խաչիկյան, 2005, էջ 34–38):

Նախ՝ «Հին աստվածներ»-ում հեղինակը վանահոր, աբեղայի և կույր վանականի կերպարների միջոցով տալիս է մարդկային կյանքի երեք հիմնական ձևեր՝

1. Չպայքարել սեփական եսի որոնումները գտնելու ճանապարհին և «տրվել» կյանքի հոսանքին:
2. Կույր աչքով դիմակայել կյանքի բոլոր փորձություններին և մնալ հաստատուն բոլոր փոթորիկներից:
3. Չվախենալ ամեն անգամ նորովի կառուցել «սեփական եսի եկեղեցին» և ձգտել հասնել կատարելության:

Շանթի գերհերոսը վանահայրն է. «Իմ փնտրածս աշխատանքն է, ներքին անդուլ ու անկաշկանդ որոնումը՝ ներքին անվերջ նվաճումները բարձունքե-բարձունք, պարիսպե- պարիսպ, տարակույսներու անդունդներուն վրայեն, ելքերով ու անկումներով. անդադար խոյանք մը դեպի ճշմարտությունը: Գացեք, գացեք՛ ներս դուք ձեր եկեղեցին, ես ալ երթամ շինեմ իմ եկեղեցիս. բայց այս անգամ ես, միայն ես, և կերտվածք մը, որ վայել ըլլա իմ Աստծուս բանականությանը, որու կամարներուն տակ իմ խնկելիք աղոթքիս ոչ մեկ բառը կեղծ չինչե, ոչ մեկ բառի արձագանքը դատարկ չինչե... Իմ տաճարիս հիմքը իմ բանականությունս պիտի ըլլա, սյունները իմ կամքս է, ու գմբեթն ալ ըլլալու է հավատքս» (Շանթ, 1980, էջ 429-430):

Ակնհայտ է, որ Շանթի գաղափարական հերոսը վանահայրն է, ում միջոցով Շանթը առաջին անգամ առավել հաստատուն կերպով ասում է, որ չկան իդեալներ և, որ իդեալականացման գնալու ճանապարհը չպետք է հեշտ ու հասանելի լինի, այլ պիտի կոփվի ու հոկվի ներքին բազմաչարչար աշխատանքով. ««Հին աստվածներ» դրամայում հեղինակի ասած աստվածության ձգտումը ամենատարբեր օրենքներից ու սահմանափակումներից ճնշված, կամա-ակամա ստեղծած հոգևոր ու մարմնավոր շղթաներից իսպառ հոգնած մարդկայինի անընդդիմադիր մղումն է դեպի նախաստեղծ՝ ազատությունն ու վայելքները, դեպի անկաշկանդ ու աննախապաշարմունք աշխարհիկ կյանքը: Հին, հեթանոս աստվածները խորհրդանշում են հենց այդ կյանքը (Սարինյան, 1991, էջ 221):

Մարդու հոգուն մոտենալու հաջորդ փորձը «Կայսր» դրաման էր: Դրամայի հենց սկզբում Շանթը, կարծես հայացք գցելով մարդուն ներս ու դրսից Նիկեֆորի բերանով նշում է. «Ա՜, շատ մութ վայր է այդ հոգի ըսվածը, որ կսողոսկին անկուշտ ցանկությունները, կոստոստեն ամբարտավան խորհուրդները, կհռհռան բնազդները անժուժկալ, և ուր կրքերը, միշտ արթուն, վագրի մը նման կծկտան ես. որսի վրա նետվելու» (Շանթ, 1980 , էջ 437):

Եվ այդ մութ հոգիների, խաբեությունների, փոփոխվող կրքերի ու շահի մեջ հայտնվում է լեռների գագաթին նստող ձյան նման մաքուր հոգին՝ Հաննան:

«Կայսր» դրամայում Հաննան շանթյան նույն իդեալի մարմնավորումն է

և դրամայում մի առանձին գիծ ու ուղղություն է: Օհան Գուրգենը բազմաթիվ պատերազմներից, հաղթանակներից և ի վերջո թագավորական գահը նվաճելուց հետո գալիս է դեպի այդ իդեալը, բայց Հաննան հակադարձում է. «Օհան Գուրգեն – Լսե՛, խոսիմ քեզի բոլորովին մերկ: Ես առեր եմ կյանքեն, ինչ որ ուժս պատեր է, բայց հոգիս միշտ մնացեր է դժգոհ, մնացեր է կարոտ, ու խուլ կերպով կարծես ինծմե իսկ ծածուկ, որոներ է ուրիշ բան մը, ուրիշ կյանք մը, որ վեր ըլլա առօրյայեն, որ չճանչնա սովորականի գռեհկությունը: Հոգիս ծարավեր է ուրիշ տեսակ էակի մը, ազնվացնող, զտող, բարձրացնող...

Հաննա– (Կամաց ետ կքաշե ձեռքը ու տարօրինակ խոսվածքով) Մի՛, մի՛,մի՛ դպիր: Կփշրես, կկորչի, կցնդի: **Երջանկության չեն դպիր, կցնդի... »** (Լևոն Շանթ, 1980, էջ 495):

Սարինյանը ճիշտ է բնութագրում «Կայսր» դրամայի գաղափարական կողմը. «Իր բնույթով «Կայսրը» նույնպես փիլիսոփայական դրամա է, և պատմական իրականությունը հանդես է գալիս որպես վերացարկում, սիմվոլիկա» (Սարինյան, Շանթ, 1991, էջ 142):

Այս երկու դրամաների գաղափարային գիծը ի վերջո պիտի եզրափակվեր «Շղթայվածը» դրամայով, որը շատ գրականագետներ համարում են Շանթի երկրորդ շրջանը փակող ստեղծագործություն: «Շղթայվածը» գրվեց Հոկտեմբերյան հեղափոխության քաղաքական ազդակների ազդեցության տակ, սակայն պահպանեց իր գաղափարային գիծը: Այս անգամ գործողությունների կենտրոնում ավերված, հալածված Անի քաղաքն է և նույնքան ավերված հոգեբանությամբ ու ներաշխարհով մարդիկ, ովքեր հաջորդելով իրար ապացուցում են մի պարզ ճշմարտություն, որ իշխանությունը և դրա ոչ ճիշտ գիտակցումը կարող է կործանարար լինել մարդու համար: Կարծես թե իշխանության համար պայքարը հավերժական է և այդ պայքարում կան իշխողներ և զրկվածներ. «Մարդկային հոգու այս երկու տիպերն էլ անհրաժեշտ են և իրար լրացնող, որովհետև կյանքն «այդ երկու հակադիր սկզբունքներու հյուսքեն է կազմված» (Սարինյան, Շանթ, 1991, էջ 150):

Վերը նշված գրական երկի ստեղծման միջավայրի մասին խոսելիս շեշտեցինք, որ առանձնակի նկատելի էր եվրոպական շունչը և, հատկապես, «Շղթայվածը» դրամայում տեսնում ենք Շանթին փիլիսոփայական ելակետից: Ըստ երևույթին Շանթը շատ լավ ծանոթ էր Օ. Կանտի (Իմանուիլ Կանտ), Սպենսերի, Հոբսի և, իհարկե, Նիցշեի տեսություններին: Անդրադառնանք «Այսպես խոսեց Զրադաշտը» գործին և գտնենք մտածողության ընդհանրություններ: Նիցշեի այս գործը համարվում է փիլիսոփայական մտքի գլուխգործոցներից մեկը և սկսում է «Գիրք ամենքի և ոչ ոքի մասին» բնաբանով: Զրադաշտը գալիս է մարդկանց ցույց տալու, որ ամեն օրը պիտի պայքար ու աշխատանք լինի՝ սեփական եսը կատարելագործելու աշխատանք. «Ես ձեզ գերմարդն եմ ուսուցանում: Մարդը մի բան է, որ պետք է հաղթահարվի: Դուք ի՞նչ եք արել նրա հաղթահարման համար:

Բոլոր էակները ցարդ մի բան ստեղծել են իրենցից վեր,– իսկ դուք կամենում եք այդ մեծ ալիքի տեղատվությու՞նը լինել և դեռ ավելի շուտ հետ

դառնալ առ կենդանին, քան հաղթահարել մարդուն:

Դուք անցել եք ճիճվից մինչև մարդ ուղին, բայց ձեր մեջ շատ բան դեռ ճիճու է: Երբևէ դուք կապիկ էիք, և անգամ հիմա մարդը դեռ ավելի կապիկ է, քան որևէ այլ կապիկ» (Նիցշե, 2018, էջ 12):

Նիցշեի գերմարդը չի փախչում կյանքի դժվարություններից, այլ ընդունում է դրանք որպես անհրաժեշտ փորձություն: Նա չի ընկնում հոռետեսության մեջ, այլ ողջունում է կյանքը իր ամբողջականությամբ, ուրախությամբ և տառապանքով: Գերմարդը պարզապես ավելի ուժեղ կամ խելացի մարդ չէ, այլ մի էակ է, ով կանգնած է «վերջին մարդու» հակառակ կողմում:

Նույն գաղափարը նկատելի նաև Շանթի հերոսների գործելակերպում: Նախ հարճի միջոցով Շանթը նշում է, որ ուր որ է պիտի գա Արտավազդ, պիտի գա, որ վերացնի աշխարհի վրա եղած չարը, պիտի գա, որ քանդե ստի և կեղծքի վրա կառուցված այս աշխարհը. «Իսկ ան ըսավ... ըսավ՝ պիտի գա, ըսավ՝ դուրս պիտի գա Ազատ Մասիսի խորին խորքերեն, ըսավ՝ պիտի գա Արտավազդը ու պիտի քանդե աշխարհքը: Ա՛խ, ինչ լավ կըլլար՝ վառելով քանդեր, կրակ տար, վառեր այս տունն ու տեղը, բերդն ու հարեմը, հետն ալ իմ տերը» (Շանթ, 1980, էջ 524):

Իսկ պառավը պնդում է, որ դա անհնար է, չէ որ դարբինները դեռ խփում են սալին, չէ որ մենք սովոր չենք միանգամից ժխտելու չարը՝ մեր իսկ ներսում ապրող չարը:

Կռիվ է Արտավազդը... Եվ այո՛, կռիվ է Արտավազդը. մեր իսկ ներսում ապրող կռիվն է Արտավազդը, որ շղթաները մենք պիտի խորտակենք ու թույլ տանք, որ ազատություն ստանա. «Մի՛, մի՛ ամրացընեք, կըսե, ձեր շղթաները, մի՛ աշխատիք ուրիշի հաշվին, ձեր աշխատանքը մի՛ տաք ուրիշին» (Շանթ, 1980, էջ 529):

«Շղթայվածը» դրաման տարբերվում է նաև պատկերների ձյուղավորմամբ և այդ ձյուղավորման մի կողմը կյանքի դևն է. «Ես եմ տերը: Ես եմ միակ տերը կյանքին: Ես եմ, որ կիշխեմ ամեն, ամեն տեղ, ուր որ կյանքը կխլրտի. օդի ոլորտներուն մեջ, ծովուն հատակը, գեձ հողին վրա, մութ գետնին տակը, ամեն, ամեն տեղ. ուր որ կյանքը կսողա, ուր որ կյանքը կլողա, ուր որ կյանքը կթռչի, ուր որ կյանքը կկառչի, ես եմ, ես եմ, որ կիշխեմ: Ես եմ միակ տերը կյանքին» (Շանթ, 1980, էջ 535):

Դեռևս բնաբանից տալով և՛ Խորենացուց մեջբերում, և՛ Կողբացուց՝ Շանթը բերում է Արտավազդի մասին եղած երկու տեսակետների գոյության հնարավորությունը, սակայն այուժեում այդ երկփեղկվածությունը արտահայտվում է այլ կերպ. Նաղաշ Նաթանը քարոզում է ազատություն՝ ներքին ազատություն, իսկ Կյանքի դևը եկել է իշխելու և ասելու, որ իզուր են պայքարի բոլոր ձևերը, որ մարդու կռիվը երբեք չի հագում մեծ արժեքների և չի դառնում սեփական եսի հետ ներքին անհաշտության դեմ պայքար, այլ այդ կռիվը պայքար է գոյության, իշխանության ու հարստության համար. «Կյանքի դեևը խորհրդանշում է գոյության կռիվը: Եվ մարդը՝ իբրև կենդանական աշխարհի ներկայացուցիչ, ենթակա է այս գերագույն սկզբունքին, որի կեցությունը ձևավորվել և ձևավորվում է բնության նախնական կերպերին մոտ

սկզբունքներով» (Գրիգորյան, 2020, էջ 288):

Այդ կռվի արդյունքում սկզբում հաղթած Պահլավունի իշխանը սկսում է իրեն պահել Էմիրի նման և ամեն ինչ անում է, որ մարի ժողովրդի մեջ ազատության տենչը, Արտավազդին մեր իսկ ներսում արթնացնելու տենչը.

«Հարձը – Դուն հաղթեր ես, դուն հաղթող ես ու եկեր ես, դուն տերն ես. ըրե՛ ինչ որ կուզես, ըրե՛ ինչ որ կրնաս, ազատ ես: Բայց ան թո՛ղ ապրի, անոր ձայնը թո՛ղ ապրի, ապրի մեր մեջ ու մեր հոգիներու խորքը... Քեզի մարմին է պետք, քեզի մարմին է պետք, որ հոշոտես, մարմին, որ տիրես, մարմին, որ վայելես. ահա՜ մենք բոլորս, մենք բոլորս միս քեզի...

Իշխան – Արտավազդը խառնակիչ մըն է, ըմբոստ մը, անհնազանդ ու մեծամիտ արքայորդի մը, նախանձոտ ու անիծված զավակ մը. իր արդար պատիժն է, որ կկրե ան Մասիսի խորունկ խորքերուն տակը, և հոնկե երբե՛ք, երբեք դուրս չի գալու, չար սպառնալիք մըն է մարդկության համար անոր դուրս գալը և խանգարում կյանքի կարգ ու կանոնին: Լա՛վ մտածե. ես տերն եմ այս քաղաքին, տերն եմ քու ամբոխին, տերն եմ քու Արտավազդին և քու անձին և այն կնոջը, որ ոտքերուդ տակ ինկեր էր գետին: Ըմբռնե, որ հոս կատարվի պիտի իմ կամքը: Եթե ընդդիմանաս՝ ո՛չ թե շղթա, մա՛հ կսպասե քեզի. Կփնտրեմ ամենեն զզվելին, ամենեն անարգը, ամենեն անգութը մահերուն մեջեն, և՛ քեզի, և՛ այդ կնոջը» (Շանթ, 1980, էջ 580–582):

Եվ այն, որ «գոյության կռիվը» սկզբնական հատվածում ստեղծում է թյուր տպավորություն, որ պայքարը հաջողվել է, որ ստացվել է հեռացնել բռնի ուժը սա ընդամենը շղարշ էր: Այո՛, հաջողվեց հեռացնել Էմիրին, այո՛ Պահլավունին ևս երկար չմնաց իշխանության և այս երկուսի իշխանատենչ մտքերը կարծես թե արդեն հեռվում էին և պիտի նոր շրջան սկսվեր, բայց հոդս են ցնդում դարբնի իշխանության գալուց հետո: Մարմնական ցանկությունները կործանում են մարդուն և բանականությունը, որով մարդը տարբերվում էր անասունից գնալով զիջում էր իր դիրքերը ու հարձը տենչում էր, որ այս անգամ էլ գա այն Արտավազդը, որը պիտի գա կործանելու, ավիրելու շուրջը:

«Քանդելը եռուն արյան ու խակ մտքի պահանջ է, քուրիկ: Հասած հոգին, հասուն դժգոհությունը նորել կտենչա, շինել, ստեղծել» (Շանթ, 1980, էջ 561):

Եվ այո՛, քանդելը արյան պահանջն է, իսկ հոգին պահանջում է կառուցել, իսկ հոգին պահանջում է քարը քարի վրա դնելով՝ Վանահոր օրինակով ներքին եկեղեցի կառուցել, և Նաղաշը Զրադաշտի օրինակով կոչ է անում առավել նոր, առավել բարդ հոգու պայքարի. «Ամրացուցե՛ք ձեր ոտքերուն կապիչները, պնդեցե՛ք ձեր գոտին ու ձեր սրտերը: Դեռ երկար, դեռ շատ երկար է այն ճամփան, որ քալեք պիտի: Արյուն քրտինքի, արյուն արցունքի այդ ոլոր ճամփան, գազանության ու բռնության այդ մոլոր ճամփան դեռ քալեք պիտի դեռ շատ է երկար: Բռնակալները տապալեցան: Բայց ի՞նչ շահեցիք դուք: Միթե ավելի ծանր ու անտանելի չէ՞ ընկեր բռնակալը. ա՛ն, որ ձեր մեջեն, ձեր վշտեն ու ձեր արցունքեն է ծներ ու նստեր է ձեր հացին, ձեր բաղդին ու ձեր հոգիին վրա» (Շանթ, 1980, էջ 563):

Եվ եթե, իսկապես, ցանկանում ենք, որ աշխարհում որևէ բան փոխվի պիտի, նախ և առաջ, այդ փոփոխությունը լինի մեզնից յուրաքանչյուրի ներ-

սում, մտքում և գլխում. «Զարմացա՛ք գիտեմ. ատ չէր ձեր լսել ուզածը. դուք կսիրեք դուրսի բռնակալները, որոնց դեմ կարելի է բողոքել, աղմկել, կրճատել ու դավել: Բայց ես կըսեմ ձեզի. հո՛ն է, հո՛ն, ձեր հոգիներուն թավ խավարի մեջ թափառող այն հզոր, այն անզուսպ բռնակալը, որ կուզե իշխե ամենուն վրա, կուզե խլե ուրիշներուն ունեցածը, կուզե ուտե ուրիշներուն աշխատանքը. կուզե, որ բոլորը երկրպագեն իրեն ու ծառայեն իր քմայքին ու հաճույքին. հո՛ն է, հոն, ձեր հոգիներու թավ խավարին մեջ, հո՛ն, ձեզմե ամեն մեկուն կրծքին տակ» (Շանթ, 1980, էջ 561):

Հանե՛նք մեր հոգին խավարից, սանձենք մեր ներսի բռնակալներին, և կգա Արտավազդը, կգա, որ մարդը վերափոխվի և դառնա գերմարդ:

Եզրակացություն

Այսպիսով, հոդվածում մենք անդրադարձանք Շանթի «Շղթայվածը» դրամայում արծարծվող հոգեբանական և փիլիսոփայական հայեցակետերին, որը հնարավորություն է տալիս ստեղծագործությանը նայել այլ դիտակետից և վերարժևորել այն:

Լևոն Շանթի ստեղծագործական ժառանգությունը հայ գրականության մեջ կարևոր շրջադարձային նշանակություն ունի: Շանթն առաջարկում է մարդկային էության ընկալման և կերպարի կառուցման նոր մոտեցումներ: Մեր կարծիքով Լևոն Շանթն առաջիններից էր, ով ներկայացրեց մարդուն ոչ միայն արտաքին գործողությունների ու պատմական իրադարձությունների համատեքստում, այլև դիտարկեց մարդուն ներքին աշխարհի, հոգեբանական բախումների, կասկածների և մտորումների ամբողջ խորությամբ: Այս կերպ նա գրականություն բերեց նոր մտածողություն, որտեղ մարդը դառնում է բարդ ու բազմաշերտ էություն:

Ասվածն առավել ընդգծված է «Շղթայվածը» դրամայում: Այստեղ Արտավազդի կերպարը չի սահմանափակվում առասպելական կամ պատմական հերոսի ավանդական պատկերով: Շանթը նրան ներկայացնում է որպես ներքին հակասություններով ապրող անհատ, որի մեջ բախվում են պարտքը, զգացմունքները, իշխանության գաղափարը և մարդկային թուլությունները: Արտավազդը դառնում է ոչ միայն ժամանակի խորհրդանիշ, այլև հոգեբանական կերպար, որի միջոցով բացահայտվում են մարդու ներքին դրամաներն ու գոյաբանական հարցադրումները, ինչը մեր կարծիքով նոր էջ է բացում Արտավազդի կերպարի բացահայտման գործում և դառնում է կարևոր ելակետ կերպարի նորովի ընկալման համար:

Անհատը Շանթի գործերում հավերժ կատարելագործման ճանապարհի անցնող տեսակ է: Անասունեն մարդ անցնող ճանապարհը բարդ է, հաճախ անանցանելի և «Շղթայվածը» դրամայում հեղինակը կարծես թե ցավով արձանագրում է, որ այդ վերափոխման համար դեռ շատ երկար ժամանակ է պետք: Շանթյան մարդը անցնում է Նիցշեի գերմարդ դառնալու ճանապարհը և այդ «նոր մարդը» պետք է առաջին հերթին վերափոխվի ներսից, հակառակ դեպքում իզուր ու անօգուտ են բոլոր փոփոխությունները:

Հոդվածը եզրափակենք Նիցշեի խոսքերով. «Մարդը լար է՝ ձգված կեն-

դանու և գերմարդու միջև, լար՝ անդունդի վրա: Վտանգավոր է առաջ գնալը, վտանգավոր է ճանապարհին կենալը, վտանգավոր է ետ նայելը, վտանգավոր է սոսկալը և կանգնած մնալը»:

Օգտագործված գրականության ցանկ

Գրիգորյան, Վ. (2020). *Լևոն Շանթի դրամապտուրգիան:* Երևան: «Արտագերս» հրատարակչություն:

Խաչիկյան, Յ. (2005). *Գեղագիտության հարցերը Լևոն Շանթի աշխատություններում:* Երևան: «Ոսկան Երևանցի» հրատարակչություն:

Նիցշե, Ֆ.(2018). *Երկեր:* Հատոր 3: Երևան: «Անտարես» հրատարակչություն:

Շանթ, Լ.(1989). *Երկեր*: Երևան: «Սովետական գրող» հրատարակչություն:

Շահինյան, Գ.(1967). *Ձիւներն ի վեր:* Պէյրութ:

Սարգսյան, Խ. (1930). *Լևոն Շանթ:* Երևան: «Հայպոլիգրաֆ» հրատարակչություն:

Սարինյան, Ս.(1991). *Լևոն Շանթ:* Երևան: «Նաիրի» հրատարակչություն:

Փանոսյան, Ս. (1992). *Լևոն Շանթ:* Երևան: «Երևանի համալսարանի» հրատարակչություն:

Астхик Бояджян

Аспирант кафедры армянской новой и новейшей литературы и методики её преподавания имени Ваче Партизуни филологического факультета Армянского государственного педагогического университета

Эл. адрес: astghikboyajyan@gmail.com

РАЗВИТИЕ ДУХОВНЫХ СПОСОБНОСТЕЙ И ПУТЬ К «СТАНОВЛЕНИЮ ЧЕЛОВЕКОМ» В ДРАМЕ ШАНТА «ПРИКОВАННЫЙ»

Цель статьи – представить внутренние подслои драмы Левона Шанта «Прикованный», рассматривая произведение за пределами исторических реалий. Исследование актуально, поскольку на протяжении веков в центре внимания как армянской, так и мировой литературы находился человек с его внутренней нераскрытой сущностью, стремлением к совершенству и вечным путём самосовершенствования. Спустя столетие мы сталкиваемся с проблемами, нашедшими своё отражение в драме. В связи с этим наша цель – подвергнуть произведение глубокому анализу и выявить те внутренние особенности, которые остались в тени исторической тематики.

Для достижения цели мы поставили перед собой следующие задачи: изучить творчество Левона Шанта, проведя тематическое и хронологическое разделение, провести сравнение «Прикованного» с другими произведениями того периода, рассмотреть драму с точки зрения мировой литературы.

В ходе исследования были использованы методы синтеза, индукции, дедукции и сравнения. Главный вывод, сделанный в рамках исследования, заключается в том, что Шант, помимо описания исторических реалий в драме

«Прикованный», пытался ответить на вечные вопросы, волнующие человечество. Каждый из нас находится в роли Артавазда: цепи, невидимые снаружи, давят на нас изнутри каждый день и каждый час, превращая нашу жизнь в ежедневную борьбу – борьбу за то, чтобы из человека стать человеком.

Ключевые слова: самосовершенствование, драма «Прикованный», Артавазд, Левон Шант, философские и психологические вопросы.

Astghik Boyajyan
Ph.D. student in the Vache Partizuni Department of Modern and Contemporary Armenian Literature and Teaching Methods, Faculty of Philology, Armenian State Pedagogical University
Email: astghikboyajyan@gmail.com

THE DEVELOPMENT OF SPIRITUAL ABILITIES AND THE PATH TO "BECOMING HUMAN" IN SHANTA'S DRAMA "CHAINED"

The purpose of this article is to present the inner layers of Levon Shant's drama «Chained,» examining the work beyond its historical context. This study is relevant because for centuries, both Armenian and world literature has focused on the human being—their inner, undiscovered essence, their striving for perfection, and their eternal journey of self-improvement. A century later, we are confronted with the issues reflected in the drama. Therefore, our goal is to deeply analyze the work and identify those inner characteristics that have remained overshadowed by its historical context.

To achieve this goal, we set ourselves the following objectives: to study Levon Shant's work, dividing it thematically and chronologically, to compare «Chained» with other works of the period, and to examine the drama from the perspective of world literature.

The study utilized the methods of synthesis, induction, deduction, and comparison. The main conclusion reached in this study is that Shant, in addition to describing historical realities in his drama «Chained,» attempted to answer the eternal questions that trouble humanity. Each of us finds ourselves in the role of Artavazd: chains, invisible from the outside, press upon us from within every day and every hour, turning our lives into a daily struggle – a struggle to become human from a human being.

Key words: self-improvement, drama «Chained,» Artavazd, Levon Shant, philosophical and psychological issues.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. հոկտեմբերի 19-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. հոկտեմբերի 24-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: